ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/194

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝

Հ. Ղազարյանի (լիազորագիր տրված՝ 20.12.2019թ.)

Հ. Քոյլոյանի (լիազորագիր տրված՝ 20.12.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2019թ. թիվ 26/26-1/20764-2019 գրությամբ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 09.12.2019թ. թիվ 01/61-26148 գրության հիման վրա, 13.12.2019թ. թիվ 26/26-1/20764-2019 գրությամբ նախաձեռնել է «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

Երևանի քաղաքապետարանի պահանջը «ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ հիմնավորված չէ հետևյալ պատճառաբանություններով:

22.02.2019 թվականին Կողմերիս միջև Քաղաքապետարանի կարիքների համար սպորտային միջոցառումների կազմակերպման նպատակով կնքվել է թիվ «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-1» ծածկագրով պայմանագիրը (հետայսու նաև՝ Պայմանագիր):

Ընկերությունը կնքված Պայմանագրի համաձայն ծառայություններ պետք է մատուցեր 3 չափաբաժիններով, որոնցից 2-ը մատուցվել են պատշաճ Պայմանագրի դրույթներին համապատասխան:

Պայմանագրի 10-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունները, որոնք պետք է մատուցվեին 01-31.10.2019 թվականի ընթացքում չեն մատուցվել փաստացի այդ ծառայության կարիքը վերանալու պատճառով: Քանզի ծառայության մատուցման վերաբերյալ իրականացվել են բանակցություններ և համապատասխան ստորաբաժանման պահանջով այդ ծառայությունները ստանալու ժամկետը բանավոր կերպով երկարաձգվել է, իսկ արդյունքում կարիքը վերանալու հիմքով, ըստ էության չեղարկվել, սակայն հիմքում դրվել է ոչ թե այդ հանգամանքը, այլ Ընկերության կողմից Պայմանագրի ժամանակացույցի ենթադրյալ խախտումը:

Նշվածը ապացուցվում է հետևյալ փաստարկներով Պայմանագրի 5.3. կետի համաձայն՝ պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացած օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.05 տոկոսի չափով: Նույն Պայմանագրի 5.7. կետի համաձայն տույժերի և (կամ) տուժանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

Սույնից հետևում է, որ Պատվիրատուն մատուցվող ծառայությունների ժամանակացույցի խախտման դեպքում օժտված է նաև տույժեր կիրառելու և

ծառայությունները ստանալու իրավասությամբ: Հաշվի առնելով այն հանգամանքը նաև, որ մատուցվող ծառայությունները իրենց բնույթով ենթադրում են ամենամյա ծրագրի իրականացում, ուստի տարվա ավարտին այդ ծառայությունների չեղարկումը, բացառում է նոր գնման ընթացակարգի ապահովումը նույն տարվա ընթացքում՝ պայմանավորված ժամկետների սղությամբ և բնականաբար տրամաբանական կլիներ Պատվիրատուի կողմից օգտվել այն հայեցողական լիազորությունից, որը կապված չէր լինի ծառայությունները չեղարկելու հետ, եթե իհարկե չի վերացել դրա կարիքը:

Պայմանագրի 10-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունները իրենց բնույթով ենթադրում են ամենամյա միջոցառումների իրականացում, կրելով նաև նախապատրաստական աշխատանքներ՝ ի թիվս այլնի, նաև մարզիկների ընտրության հարցում, ուստի այդ աշխատանքների չկատարելը՝ ինքնին ենթադրում է ծառայությունների գնման կարիքը վերանալու մասին, հակառակ պարագայում Պատվիրատուն կձեռնարկեր որոշակի միջոցներ ծառայությունները անցկացնելու համար այլ ժամկետներ սահմանելու համար, որոնք կուղեկցվեին համապատասխան գրագրությամբ, իսկ հակառակ դեպքում Պայմանագիրը միակողմանի կլուծվեր, ոչ թե՞ 09.12.2019 թվականին այլ առավելագույնը 01.11.2019 թվականին, ժամանակացույցով նախատեսված ժամկետի լրանալուց հետո, որպեսզի հնարավոր լիներ այլ գնման ընթացակարգ սկսելու և ընթացիկ տարվա մեջ դրա կատարումն ապահովելու համար: Այսինքն նշվածից ակնհայտ է, որ Պատվիրատուն մինչ 09.12.2019 թվականը քննարկել է միջոցառման անցկացման նպատակահարմարությունն ու ժամկետները և իվերջո արձանագրելով գնման կարիքը վերանալու փաստը միակողմանի լուծել է Պայմանագիրը մեկ այլ հիմքով, ոչ իրավաչափորեն մեղավորությունը վերապահելով Ընկերությանը:

Վերոգրյալի հետ միասին քննարկման է ենթակա նաև Ընկերության վարքագիծը նույն Պայմանագրով սահմանված մյուս ծառայությունների կատարման մասով, որոնք իրականացվել են պատշաճ: Իսկ պարտավորության խախտումը առաջացնում է իրավական հետևանքներ միայն մեղքի առկայության դեպքում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար

պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Ուստի սույն դեպքում հաշվի առնելով այն հանգամանքը, որ Պայմանագրի 10-րդ չափաբաժնով նախատեսված ծառայությունները ըստ էության չեն մատուցվել, Պատվիրատուի մոտ դրա կարիքը վերանալու պատճառով, որի վերաբերյալ կատարման ժամկետները բանավոր քննարկումների արդյունքում երկարաձգվել են, ապա պետք է փաստել, որ բացակայում է Ընկերության մեղքի առկայությունը, որը և բացառում է պատասխանատվության հիմքերի ծագումը: Իսկ սույն դեպքում Պայմանագրի միակողմանի լուծման հիմքում դնել նույն Պայմանագրի 2.1.3. կետի բ) ենթակետը իրավաչափ չէ և չի բխում գործընկերային հարաբերություններից:

Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին 526-Ն որոշման հավելված 1-ով հաստատված կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝

համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են՝ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Նշվածը համադրելով սույն գործի փաստերի հետ և արձանագրելով, որ Ընկերության կողմից Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ժամկետների խախտման մեջ բացակայում է մեղքի առկայությունը, որը իր հերթին և բացառում է պատասխանատվությունը, ուստի ընդունելով նաև այն փաստը, որ նշված ծառայությունները ստանալու կարիքը Պատվիրատուի մոտ վերացել է, գտնում եմ, որ Պայմանագրի միակողմանի լուծման հիմքում պետք է դրվեր կարիքը վերանալու հանգամանք, այլ ոչ թե ենթադրյալ խախտումը և Ընկերությունը մեղքի բացակայության հիմքով չպետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը խնդրել է վերոգրյալով պայմանավորված մերժել Երևանի քաղաքապետարանի պահանջը՝ «ՊՐԵՍՏԻԺ ԼԵՆԴ» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԼԳ-2019/194 ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Երևանի քաղաքապետարանը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 09.12.2019թ. թիվ 01/61-26148 գրությամբ հայտնել է, որ Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ի միջև 22.04.2019թ. կնքված ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-1 ծածկագրով գնման պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների կատարման պարտավորությունը համաձայն՝ սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ ծառայությունը կատարվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով, որի վերջնաժակետը լրացել է 31.10.2019թ. և Ընկերությունը չի կատարել պայմանագրով ստանձնած պարտավորությունները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց,

իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակատեի համաձայն՝ պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 366-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերությունը խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները 10-րդ չափաբաժնի մասով /Արաբկիր վարչական շրջանի ձյուդոյի բաց առաջնություն/՝ Երևանի քաղաքապետարանը ղեկավարվելով վերը նշված իրավական հիմքերով, միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված /10-րդ չափաբաժնի մասով/ և պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառել է Կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/194 ընթացակարգի շրջանակներում 26.12.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/194 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ի միջև 22.04.2019 թվականին կնքվել է ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-1 ծածկագրով գնման պայմանագիր, որի համաձայն

Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սուն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

2. Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

3. Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 10-րդ չափաբաժնով նախատեսված ծառայության մատուցման ժամկետ է սահմանվել 01.10.2019-31.10.2019թ.:

4. «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ին ուղղված 09.12.2019թ. թիվ 01/61-26149 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի պահանջը, Երևանի քաղաքապետարանը 10-րդ չափաբաժնի մասով /Արաբկիր վարչական շրջանի ձյուդոյի բաց առաջնություն/ միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.12.2019թ. թիվ 26/26-1/20764-2019 գրությունը, Երևանի քաղաքապետարանի 09.12.2019թ. թիվ 01/61-26148 գրությունը և կից փաստաթղթերը, գործով առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝*** վճարել դրամ, հանձնել գույք, ***կատարել աշխատանք***, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ

մնալ որոշակի գործողություն կատարելուց, ***իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը***:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. ***<u>խախտել է պայմանագրով նախատեսված</u>*** կամ գնման գործընթացի շրջանակում ***<u>ստանձնած պարտավորությունը</u>***, ո***<u>րը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը</u>*** կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Երևանի քաղաքապետարանի և «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ի միջև 22.04.2019 թվականին կնքվել է ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-1 ծածկագրով գնման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի համաձայն Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը համաձայն սուն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներում:

Պայմանագրի 2.1.3-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

<u>բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:</u>

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ ***<u>պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը</u> կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:***

Նույն օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:***

Այսպիսով՝ «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ին ուղղված 09.12.2019թ. թիվ 01/61-26149 գրությամբ Երևանի քաղաքապետարանը հայտնել է, որ հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետի պահանջը, այն է՝ խախտվել է ծառայության մատուցման ժամկետը, Երևանի քաղաքապետարանը 10-րդ չափաբաժնի մասով /Արաբկիր վարչական շրջանի ձյուդոյի բաց առաջնություն/ միակողմանի մասնակի հրաժարվում է Ընկերության հետ

կնքված ծառայությունների գնման պայմանագրից՝ համապատասխանաբար համարելով այն մասնակի լուծված:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Այսպիսով՝ Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի 10-րդ չափաբաժնով ***ծառայության մատուցման ժամկետը*** նախատեսվել է ***01.10.2019-31.10.2019թ.***:

Ուսումնասիրելով Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով սահմանված ծառայության մատուցման ժամկետի վերաբերյալ վերոհիշյալ դրույթը, գտնում եմ, որ «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ն թույլ է տվել Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետի խախտում, քանի որ համաձայն Պայմանագրի՝ ծառայության մատուցման առավելագույն ժամկետն ըստ էության նախատեսված է եղել 31.10.2019թ., իսկ Պայմանագրի 2.1.3 կետի «բ» ենթակետը սահմանում է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Հիմք ընդունելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ն թույլ է տվել վերջինիս և Երևանի քաղաքապետարանի միջև 22.04.2019թ. կնքված «ԵՔ-ԳՀԾՁԲ-19/64-1» պայմանագրով նախատեսված պարտավորության խախտում, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի մասնակի լուծմանը: Հետևաբար, գտնում եմ, որ «Պրեստիժ լենդ» ՍՊԸ-ն թույլ է տվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, ուստի առկա են վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

ՈՐՈՇԵՑԻ

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 13.12.2019թ. թիվ 26/26-1/20764-2019 գրությամբ «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Պրեստիժ Լենդ» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**